# ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ν ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-25/54

ք. Երևան «05» դեկտեմբերի 2025 թ.

«ԵՊՀ Հիմնադրամը», ի դեմս պրոռեկտոր Ա. Գ. Մալխասյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ԼանԱր ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Տիգրան Դանիելյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 9 613 332 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,18 (զրո ամբողջ տասնութ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերու-թյունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորու-թյունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապա-րակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակ-վելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանու-ցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «ԵՊՀ» Հիմնադրամ | «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ |
| ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | ՀՀ ք. Երևան Բաբաջանյան 163/13 |
| «Արդշինբանկ» ՓԲԸ | «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 01506928 | ՀՎՀՀ 01843373 |
| Հ/Հ 2470100009060000 | Հ/Հ 2500010195390100 |
| պրոռեկտոր՝ Ա. Գ. Մալխասյան | տնօրեն՝ Տ. Դանիելյան |
| ______________________ | ______________________ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | |

Հավելված N
« 05 » դեկտեմբերի 2025 թ. կնքված
ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-25/54 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախա-տեսված չափա-բաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհա-նուր գինը/ՀՀ դրամ | ընդհա-նուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 1 | 30211200/64 | Դյուրակիր համակարգիչ 25RG-6A034 | HP, HP, HP, HP | HP Victus CPU/պրոցեսոր՝ Ryzen 5 -8645 HS, օպերատիվ հիշողություն՝ 16 GB (1x16GB) DDR5, SSD/ Կոշտ սկավառակ՝ 512 Gb PCIe, NVMe, Տեսաքարտ: NVIDIA GeForce RTX 4050 6GB Էկրանի անկյունագիծ՝ 15.6", FHD (1920 x 1200), 144 Hz, IPS, anti-glare, 300 nits, Այլ առանձնահատկություններ՝ ներկառուցված միկրոֆոն, ներկառուցված բարձրախոսներ, վեբ տեսախցիկ՝ 720p HD, USB Type-A 5Gbps signaling rate (HP Sleep and Charge); USB Type-A 5Gbps signaling rate; HDMI 2.1; headphone/microphone combo; RJ-45; USB Type-C® 5Gbps signaling rate, Wi-Fi 6E (2x2) and Bluetooth® 5.4, առանձնացված թվային ստեղնաշար, Մարտկոց ՝ 4-cell, 70 Wh Polymer: Ներառված ՀՀ տարածքում գործող ստանդարտներին համապա-տասխան հոսանքի մալուխ: Ներառյալ պայուսակ նախատեսված տվյալ դյուրակիր համակարգչի համար: Երաշխիքային սպասարկում 1 տարի: Հավաստագիր պաշտոնական ներկայացուցչի կողմից (DAF): Մեկ պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոն ՀՀ-ում: Առաջարկվող սարքավորումների երաշխիքային ժամկետում սպասարկվում են պաշտոնական սպասարկման կենտրոնում: | հատ | 489564 | 489564 | 1 | Ալեք Մանուկյան 1 | 1 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 25.12.2025 |
| 3 | 30211200/66 | Դյուրակիր համակարգիչ 24AA-1C053 | HP, HP, HP, HP | HP Victus CPU/պրոցեսոր՝ Core 7 -240 H (up to 5.2 GHz with Intel® Turbo Boost Technology, 24 MB L3 cache, 10 cores, 16 threads), օպերատիվ հիշողություն՝ 24 GB DDR5, SSD/ Կոշտ սկավառակ՝ 1 Tb PCIe, NVMe, Տեսաքարտ: առնվազն NVIDIA GeForce RTX 5060 8GB կամ ավելի Էկրանի անկյունագիծ՝ 15.6", FHD (1920 x 1080) 144 Hz, IPS, anti-glare, 300 nits, | հատ | 739434 | 739434 | 1 | Ալեք Մանուկյան 1 | 1 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 25.12.2025 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Այլ առանձնահատկություններ՝ ներկառուցված միկրոֆոն, ներկառուցված բարձրախոսներ, վեբ տեսախցիկ՝ 720p HD, USB Type-A 5Gbps signaling rate (HP Sleep and Charge); USB Type-A 5Gbps signaling rate; HDMI 2.1; headphone/microphone combo; RJ-45; USB Type-C® 5Gbps signaling rate (USB Power Delivery 3.1, DisplayPort™ 1.4a, HP Sleep and Charge), Wi-Fi 6 (2x2) and Bluetooth® 5.4 , առանձնացված թվային ստեղնաշար, Մարտկոց ՝ 4-cell, 70 Wh Polymer: Ներառված ՀՀ տարածքում գործող ստանդարտներին համապատասխան հոսանքի մալուխ: Ներառյալ պայուսակ նախատեսված տվյալ դյուրակիր համակարգչի համար: Երաշխիքային սպասարկում 1 տարի: Հավաստագիր պաշտոնական ներկայացուցչի կողմից (DAF): Մեկ պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոն ՀՀ-ում: Առաջարկվող սարքավորումները երաշխիքային ժամկետում սպասարկվում են պաշտոնական սպասարկման կենտրոնում: | | | | | | | |
| 4 | 30211200/67 | Դյուրակիր համակարգիչ 24WS-1E035 | ASUS, ASUS, ASUS, ASUS | ASUS TUF Gaming A17 FA707 CPU/պրոցեսոր՝ AMD Ryzen 7 7435HS Mobile Processor 3.1GHz (20MB Cache, up to 4.5 GHz, 8 cores, 16 Threads) օպերատիվ հիշողություն՝ 16 GB (1x16GB) DDR5, SSD/ Կոշտ սկավառակ՝ 1 Tb PCIe, NVMe, Տեսաքարտ: NVIDIA GeForce RTX 4050 6 GB Էկրանի անկյունագիծ՝ 17.3", FHD (1920 x 1200), 144 Hz, IPS, anti-glare, 250 nits, Այլ առանձնահատկություններ՝ ներկառուցված միկրոֆոն, ներկառուցված բարձրախոսներ, վեբ տեսախցիկ՝ 720p HD, 1x USB 3.2 Gen 2 Type-C (data speed up to 10Gbps); 1x USB 3.2 Gen 2 Type-C with support for DisplayPort™ / power delivery / G-SYNC (data speed up to 10Gbps), 2x USB 3.2 Gen 1 Type-A (data speed up to 5Gbps); RJ 45; HDMI 2.1 Wi-Fi 6 (2x2) and Bluetooth® 5.3 , առանձնացված թվային ստեղնաշար, Մարտկոց ՝ 4-cell, 90 Wh Polymer: Ներառված ՀՀ տարածքում գործող ստանդարտներին համապատասխան հոսանքի մալուխ: Ներառյալ պայուսակ նախատեսված տվյալ դյուրակիր համակարգչի համար: Երաշխիքային սպասարկում 1 տարի: Հավաստագիր պաշտոնական ներկայացուցչի կողմից (DAF): Մեկ պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոն ՀՀ-ում: Առաջարկվող սարքավորումները երաշխիքային ժամկետում սպասարկվում են պաշտոնական սպասարկման կենտրոնում: | հատ | 548034 | 548034 | 1 | Ալեք Մանուկյան 1 | 1 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 25.12.2025 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | 30211200/68 | Դյուրակիր համակարգիչ 24SSAH-6A021 | HP, HP, HP, HP | HP Victus CPU/պրոցեսոր՝ AMD Ryzen 5 240 (up to 5.0 GHz max boost clock, 16 MB L3 cache, 6 cores, 12 threads) օպերատիվ հիշողություն՝ 16 GB (1x16GB) DDR5, SSD/ Կոշտ սկավառակ՝ 512Gb PCIe, NVMe, Տեսաքարտ: NVIDIA GeForce RTX 5050 8GB կամ ավելի Էկրանի անկյունագիծ՝ առնվազն 15.6", FHD (1920 x 1200), 144 Hz, IPS, anti-glare, 300 nits, Այլ առանձնահատկություններ՝ ներկառուցված միկրոֆոն, ներկառուցված բարձրախոսներ, վեբ տեսախցիկ՝ 720p HD, USB Type-A 5Gbps signaling rate (HP Sleep and Charge); USB Type-A 5Gbps signaling rate; HDMI 2.1; headphone/microphone combo; RJ-45; USB Type-C® 5Gbps signaling rate (USB Power Delivery 3.1, DisplayPort™ 1.4a, HP Sleep and Charge), Wi-Fi 6E (2x2) and Bluetooth® 5.3 , առանձնացված թվային ստեղնաշար, Մարտկոց ՝ 4-cell, 70 Wh Polymer: Ներառված ՀՀ տարածքում գործող ստանդարտներին համապատասխան հոսանքի մալուխ: Ներառյալ պայուսակ նախատեսված տվյալ դյուրակիր համակարգչի համար: Երաշխիքային սպասարկում 1 տարի: Հավաստագիր պաշտոնական ներկայացուցչի կողմից (DAF): Մեկ պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոն ՀՀ-ում: Առաջարկվող սարքավորումները երաշխիքային ժամկետում սպասարկվում են պաշտոնական սպասարկման կենտրոնում: | հատ | 588906 | 588906 | 1 | Աչեք Մանուկյան 1 | 1 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 25.12.2025 |
| 6 | 30211200/69 | Դյուրակիր համակարգիչ 23RL-6C035/23rl-5A044 | Dell, Dell, Dell, Dell | Dell Pro 13 Plus CPU/պրոցեսոր՝ AMD Ryzen 5 220 (22 MB cache, 6 cores, 12 threads, up to 4.9 GHz) օպերատիվ հիշողություն՝ 16 GB (1x16GB) DDR5, SSD/ Կոշտ սկավառակ՝ 512Gb PCIe, NVMe, Տեսաքարտ: AMD Radeon(TM) 740M graphics Էկրանի անկյունագիծ՝ 2in1, 13.3", Touch, FHD+ 1920 x 1200, 60Hz, IPS, 300 nit, 100%sRGB, Այլ առանձնահատկություններ՝ ներկառուցված միկրոֆոն, ներկառուցված բարձրախոսներ, վեբ տեսախցիկ՝ FHD HDR + IR Camera, առնվազն՝ 2x USB Type-C ports with Display port Alt Mode/Power Delivery; USB 3.2 Gen 1 port with Power Share, USB 3.2 Gen 1 port, HDMI 2.1, Wi-Fi 7 (2x2) and Bluetooth® 5.4, առանձնացված թվային ստեղնաշար, Մարտկոց ՝ 3-cell, 45 Wh : ՕՀ: Windows 11 Pro Ներառված ՀՀ տարածքում գործող ստանդարտներին համապատասխան հոսանքի մալուխ: Ներառյալ պայուսակ նախատեսված տվյալ դյուրակիր համակարգչի համար: Երաշխիքային սպասարկում 1 տարի: Հավաստագիր պաշտոնական ներկայացուցչի կողմից (DAF): Մեկ պաշտոնական երաշխիքային | հատ | 649524 | 1948572 | 3 | Աչեք Մանուկյան 1 | 3 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 25.12.2025 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | սպասարկման կենտրոն ՀՀ-ում: Առաջարկվող սարքավորումները երաշխիքային ժամկետում սպասարկվում են պաշտոնական սպասարկման կենտրոնում: | | | | | | |
| 7 | 30211200/70 | Դյուրակիր համակարգիչ 25RG-3C170/ 21AG-1C048 | HP, HP, HP, HP | HP OMEN CPU/պրոցեսոր՝ Intel® Core Ultra 9 285H (up to 5.4 GHz with Intel® Turbo Boost Technology, 24 MB L3 cache, 16 cores, 16 threads)<br>օպերատիվ հիշողություն՝ 32 GB (2x16GB) DDR5, SSD/ Կոշտ սկավառակ՝ 1 Tb PCIe, NVMe,<br>Տեսաքարտ: առնվազն NVIDIA GeForce RTX 5070 8GB Էկրանի անկյունագիծ՝ 16", WQXGA; IPS, micro-edge, anti-glare, sRGB, Այլ առանձնահատկություններ՝ ներկառուցված միկրոֆոն, ներկառուցված բարձրախոսներ, վեբ տեսախցիկ՝ True Vision 1080p FHD, ՝ 1xUSB Type-A 10Gbps signaling rate; 2x USB Type-A 5Gbps signaling rate; AC smart pin; HDMI 2.1; headphone/microphone combo; RJ-45; 1xUSB Type-C® 10Gbps signaling rate (USB Power Delivery 3.0,DisplayPort™ 1.4, HP Sleep and Charge); Wi-Fi 6E (2x2) and Bluetooth® 5.3 , առանձնացված թվային ստեղնաշար (Full-size, 4-zone RGB backlit), Մարտկոց ՝ 4-cell, 70 Wh Polymer: Մարտկոցի աշխատանքի տևողություն (Battery life)՝ 5 ժամ: Հոսանքի աղբյուր՝ առնվազն 150 W Ներառված ՀՀ տարածքում գործող ստանդարտներին համապատասխան հոսանքի մալուխ: Ներառյալ պայուսակ նախատեսված տվյալ դյուրակիր համակարգչի համար: Երաշխիքային սպասարկում 1 տարի: Հավաստագիր պաշտոնական ներկայացուցչի կողմից (DAF): Մեկ պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոն ՀՀ-ում: Առաջարկվող սարքավորումները երաշխիքային ժամկետում սպասարկվում են պաշտոնական սպասարկման կենտրոնում: | հատ | 1024536 | 2049072 | 2 | Ալեք Մանուկյան 1 | 2 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 25.12.2025 |
| 8 | 30211200/71 | Դյուրակիր համակարգիչ 23rl-5A044/ 23RL-6C035 | HP, HP, HP, HP | HP OmniBook X Flip Տեսակ Flip 2-in-1 Laptop CPU/պրոցեսոր՝ Intel Core Ultra 7 256V (up to 4.8 GHz with Intel® Turbo Boost Technology, 12 MB L3 cache, 8 cores, 8 threads) օպերատիվ հիշողություն՝ 16 GB LPDDR5x-8533 MT/s (onboard), SSD/ Կոշտ սկավառակ՝ 1 Tb PCIe, NVMe, Տեսաքարտ: Intel Arc™ 140V GPU (8GB) Էկրանի անկյունագիծ՝ 16", 2K (1920 x 1200), multitouch-enabled, IPS, edge-to-edge glass, micro-edge, 400 nits, 62.5% sRGB<br>Այլ առանձնահատկություններ՝ ներկառուցված միկրոֆոն, ներկառուցված բարձրախոսներ, վեբ տեսախցիկ՝ 5MP IR camera, 2xUSB Type-A 10Gbps | հատ | 649950 | 3249750 | 5 | Ալեք Մանուկյան 1 | 5 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 25.12.2025 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | signaling rate; 1xHDMI 2.1; headphone/microphone combo; Thunderbolt™ 4 with USB Type-C® 40Gbps signaling rate (USB Power Delivery 3.1, DisplayPort™ 2.1, HP Sleep and Charge); 1 USB Type-C® 10Gbps signaling rate (USB Power Delivery 3.1, DisplayPort™ 1.4a, HP Sleep and Charge) Wi-Fi 7 (2x2) and Bluetooth® 5.4, առանձնացված թվային ստեղնաշար<br>ՕՀ: Windows 11 Home: Մարտկոց ՝ 4-cell, 68 Wh Polymer: Ներառված ՀՀ տարածքում գործող ստանդարտներին համապատասխան հոսանքի մալուխ: Ներառյալ պայուսակ նախատեսված տվյալ դյուրակիր համակարգչի համար: Երաշխիքային սպասարկում 1 տարի: Հավաստագիր պաշտոնական ներկայացուցչի կողմից (DAF): Մեկ պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոն ՀՀ-ում: Առաջարկվող սարքավորումները երաշխիքային ժամկետում սպասարկվում են պաշտոնական սպասարկման կենտրոնում: | | | | | | | |

**ԳՆՈՐԴ**

«ԵՊՀ» Հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01506928
Հ/Հ 2470100009060000
պրոռեկտոր՝ Ա. Գ. Մալխասյան

-------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԼանԱր Սերվիս» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան Բաբաջանյան 163/13
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01843373
Հ/Հ 2500010195390100
տնօրեն՝ Տ. Դանիելյան

-------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N
« 05 » դեկտեմբերի 2025 թ. կնքված
ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-25/54 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 30211200/64 | Դյուրակիր համակարգիչ 25RG-6A034 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 489564 | 489564 |
| 3 | 30211200/66 | Դյուրակիր համակարգիչ 24AA-1C053 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 739434 | 739434 |
| 4 | 30211200/67 | Դյուրակիր համակարգիչ 24WS-1E035 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 548034 | 548034 |
| 5 | 30211200/68 | Դյուրակիր համակարգիչ 24SSAH-6A021 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 588906 | 588906 |
| 6 | 30211200/69 | Դյուրակիր համակարգիչ 23RL-6C035/23rl-5A044 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1948572 | 1948572 |
| 7 | 30211200/70 | Դյուրակիր համակարգիչ 25RG-3C170/ 21AG-1C048 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 2049072 | 2049072 |
| 8 | 30211200/71 | Դյուրակիր համակարգիչ 23rl-5A044/ 23RL-6C035 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 3249750 | 3249750 |

**ԳՆՈՐԴ**

«ԵՊՀ» Հիմնադրամ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01506928
Հ/Հ 2470100009060000
պրոռեկտոր՝ Ա. Գ. Մալխասյան

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԼանԱր Սերվիս» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան Բաբաջանյան 163/13
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01843373
Հ/Հ 2500010195390100
տնօրեն՝ Տ. Դանիելյան

--------------------------------
/ստորագրություն/